## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.


ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.

1. Սրբազան Պարտաճանաչութիւնը . Կ. Վ. . 489
2. Աստուծոյ կամ Երկնքի Արքայութեան գաղափարը. . . . . Կ. Վ. . 491
3. Թուղթ Տոմիտասայ Հայոց Կաթուղիկոսի ի Պարսս . . . . . Կ. Վ. . 494
4. Նիւթեր Հայոց եկեղեց. պատմութեան Ղ. Ս. 495
5. ԵԿԵՂԵՑԱՍԱՆ ՋՐՈՒՅՑՆԵՐ . . . . . 500

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

6. .·.—ՍԱՐՆ Ի ՎԵՐ. Ց. Եղիշանիսեան . 503
7. Պարթեւները Պարսկաստանում . Ն. Ք. 505
8. Մի ակնարկ Հայաստանի պատմական անցեալի վերայ . . . . . Ս Կ. . 507
9. Նամակ խմբագրութեան Մեսրոբ Արքեպիսկոպոս 512

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

10. Կրթ. կան նոր խնդիրներ . . Ս. Մ . 513
11. Պատկերներ Շիրակի գիւղ. կեանքից Ն. Մ. . 516
12. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ . . . . . 519

ԱԶԳԱՑԻՆ.

13. ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԱՑՑ . . . . . 521
Մայր Աթոռ. . . . . .
Տաճկահայք . . . . . .

ՊԱՀՏՕՆԱԿԱՆՔ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.
ՑԱՒԵԼՈՒԱԾ.
ԺԱՄՈՒՑՈՒՄՆ.
ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:


## ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ 1896 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ.

## ԹՈՒՂԹ ԿՈՄԻՏԱՍԱՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ի ՊԱՐՍՍ.

Ամենայն բան ջանիւ,* ասէ ուրեմն Ժողովողն ի խօսն իւրում, իմաստունն Սողոմոն՝ մանաւանդ խօսել բանս մտաւորս և լսել յումեքէ զհանճարով ասացեալն, որք են աշխարհական զրօսանաց և ցնորից երկրի խօսք՝ ի մարդկանէ ասացեալք։ Ո՛րչափ ևս առաւել ի Գրոց սրբոց բերանովք արժանաւոր մարդկան՝ սպասաւորաց պատգամացն Աստուծոյ, ճառք գոցին ապաշխարութեամբ լի լսողաց իմանալ, քան թէ սոցա ասել՝ Հոգւոյն շնորհիւ։ Վասն որոյ կարօտանամ յոյժ շնորհիւ Քրիստոսի ես ասօղս, զոր մարդոյ բերանով ոչ է արժան ումեք խօսել, բայց թէ բերան Աստուծոյ որ կարասցէ լինել՝ զպատուականն հանելով յանարգէ, և կամ որպէս միւսն, թէ եղ զբերան իմ սուր սուսեր։** ապա համարձակեսցի խօսել հրամանաւ Ցեառն և ոչ լռել, զի ժողովուրդ բազում լիցի Քրիստոսի։ Եւ մանաւանդ յոյժ դժուարին է լինել հասկաքաղ ի հունձս և ճռաքաղ ի կութս՝ զայլոց յառաջագոյն զբանս գրոց ասացեալ մեծաւ քննութեամբ ոմանց թերևս և ի գիրս տպաւորեալ է զիմաստսն։ վասնզի բազմաժամանակեայնն և հինն որպէս զինի յախորժելի է յարբմունս քան զնորս։ Նոյնպէս և տարրաց եալ զբանն զրազում ժամանակս ի լսողացն միտս՝ մանաւանդ զի և ոչինչ սխալանք ուղիղ հաւատոյ գտանիցին յառաջագոյն ասացեալն, և ոչ անուշանից ոմանց կամ սակաւուց վարդապետութիւն բանից իցէ լինել։ Իսկ իմ յաստուածայինսն թեւակոխելով մտածութիւնս՝ զյառաջաբերութիւն բանիցն ընծայեցից, և զայս ոչ նորոգաձեւութեամբ, յաղագս վերին և լուսաշաւիղ գանձուն պատուականի, որ է փրկութիւն աշխարհի, թէ պէտ և յաման ծածկեալ ըստ Առաքելոյն ձայնի,* վասնզի չէ ծագեալ առ նոսա լուսաւորութիւն աւետարանի փառացն Քրիստոսի, բայց ո՛չ թաքչի ի սիրողաց իւրոց՝ հասանէ առ ցանկացողս իւր,** զի զմտաւ ածելով ըստ նմանէ՝ կատարեալ իմաստութիւն է աւարտել զանուն նորա ուղիղ հաւատովք, արմատ անմահութեան ըստ Սողոմոնեան բանին՝ առաւել որ ի մահ Որդւոյն Աստուծոյ կենդանացեալք հաղորդեցան անձառաբար, զՀոգւոյն սրբոյ զյորդեգրութեանն շնորհս յինքեանս բերելով։ Գրեալ է, թէ իմաստունն ի ժամանակին յայնմիկ լռեսցէ, բայց այժմ ժամանակս զիս պահանջէ՝ վասն արտաքնոցն, որք ոչ են յայսմ գաւթէ, և համարձակութիւն տայ, թէ գնացէք մինչ զլոյսն ունիք*** ի բարեաց գործոց առաքինութիւնս անխափան, և թէ յամենայն ժամ պարտ է ի բարիս նախանձաւոր լինել, և դարձեալ՝ Յոսեցայ ըստվկայութիւնս քո առաջի թագաւորաց և ոչ ամաչեցի։ † առանց գանդաղանաց մեք եղիցուք փոխանակ բազմաց սատարութիւն ազգաթից իմոցս հօտի, քաջալերեալք հասցուք ի կատարումն բարեաց, և ի նշանակեալ նպատակ երանելոյն Պօղոսի, որոյ պարծանք՝ խաչն, և ազատութիւն՝ յերկինս, և կատարի-

* Ժող. Ա. 8 ** Օր. որպէս սուսեր սուր:

* Բ. Կորնթ. Դ. 4. ** Իմաստ. Զ. 14. *** Յովհ. ԺԲ. 35. † Մաղմ. ՃԺԸ. 46,